

ՀԵՏԵԻՆՆԵՔ ՆՈՒՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԻՆ

Կատարում անխառն քի հիման վրայ աշխատող կարելի է որոշ գաղափարներ անել որոշում անողների վերաբերմամբ, ուղենիշ ունենալով Աստուածաշնչային պատգամը և նրան յարող գրականությունը: Յիշեալ պատգամում բացատրութեան կարգում է յատկապէս «ձեռք» բառի յիշատակութիւնը «երգէր ձեռք» բառակապակցութիւնում: Եթէ Դաւիթը նուազում է լարային գործիք, ինքնաթիռի անհանալի է, որ պէտք է նուազէր ձեռքով: Հետեւաբար կարիք չկար գրելու «նուագում էր ձեռքով»: այլ պէտք էր գրել պարզապէս՝ «նուագում էր»: Պատահական չէ, որ Արեւնայում որոշ թարգմանիչներ «ձեռք» բառը չեն թարգմանել: Այդպէս չեն վարուել, սակայն, Աստուածաշնչը երբայնեւից յանարէն և յանարէնից հայերէն թարգմանողները: Ինչպէս յանարէնում, այնպէս էլ հայերէնում երեք տարբեր գլուխներում (Թագաւորութեանց առաջին, գլուխ ԺԶ. տուն 23, գլ. ԺԷ, տ. 10, գլ. ԺԹ, տ. 9) հետեւողականորէն գործածուած է «ձեռք» բառը: Բերեւք մեզ հաւաքաբար հաստատուններն ըստ գլուխների հերթականութեան. «Եւ լինէր յորժամ հասանէր այսն չար ի վերայ Սաւուղայ, անոյր Դաւիթ գնարն և նուագէր ձեռամբ իւրով: Եւ հանգուցանէր զՍաւուղ, և զիւրանար նմա, և մեկնէր ի նմանէ այսն չար» (գլ. ԺԶ): «Եւ եղև ի վաղիւ անգր՝ և հարաւ այս չար յԱստուծոյ ի վերայ Սաւուղայ, և մարգարէանայր ի մէջ տան իւրոյ, և Դաւիթ երգէր ձեռամբ իւրով՝ որպէս և հանուպան: Եւ զեղարգն ի ձեռն Սաւուղայ» (գլ. ԺԷ): «Եւ եղև այս չար ի տեսնէ ի վերայ Սաւուղայ, և ինքն նստէր ի տան, և զեղարգն ի ձեռն նորա, և Դաւիթ երգէր ձեռով իւրով» (գլ. ԺԹ):

Պարզ տեսնում ենք, որ բոլոր երեք գլուխներում էլ Դաւիթի ձեռքը խորհրդանշում է խաղաղութիւն և կոչուած է խաղաղեցնելու այսահար Սաւուղի խռով-

եալ հոգին: Միաժամանակ նկատում ենք, որ «ձեռք» բառը պարտադիր է նաև Սաւուղի դէպքում: Ինչպէս որ Դաւիթ ձեռքը միշտ զբաղուած է խաղաղարար քնարով, այնպէս էլ՝ «զեղարգն ի ձեռն Սաւուղայ», ... «զեղարգն ի ձեռն նորա»: Շատ որոշակիօրէն հակադրուած են երաժշտական գործիք և զէնք կրող ձեռները: Հակադրուած են խաղաղութիւնն ու խռովութիւնը: Ըստ որում՝ երկու դէպքում էլ առաջին հայեացքից թւում է, թէ աննպատակ են գործածուած ինչ որ բաներ, առաջին դէպքում՝ ձեռքի յիշատակութիւնը, երկրորդում՝ տանը նստած վիճակում (երբ որեւէ վտանգ չկայ) ձեռքին զէնք կրելու, զինուած լինելու հանգամանքը: Միայն ուշագիտ քննելուց և երեք տարբեր գլուխներում միեւնոյն բանը հետեւողականորէն կրկնուած լինելու փաստը նկատելուց յետո՛յ է, որ հակառակում ենք, որ ո՛չ միայն որեւէ աննպատակ բան չկայ, այլև, քննահակառակը, «Թագաւորութեանց գրքի» հեղինակի նպատակը եղել է հենց ձեռները և նրանց բռնած գործիքների հակառակ պաշտօնները ցուցադրելու: Հաղարամեականը շարունակ մարդկութիւնը Դաւիթին դիմել է որպէս խաղաղութիւնն մարմնաւորող մեծութեան, իսկ Սաւուղին կոչել է զեղարգնաւոր: «Եւ զՍաւուղ զեղարգնաւոր կոչէ» (ՆՇԹ):

Դաւիթի շնորհիւ՝ նրա նուագած գործիքը՝ քնարը նայնպէս խորհրդանշել է խաղաղութիւն: Մեր դարի սկզբին Պետերբուրգում հրատարակուած ռուսերէն «Երբայնեւ հանրագիտարանում» գրանցուած է (էջ 394) ազգայնական գրականութիւնից քաղուած այսպիսի մի պատգամ. «Դաւիթի մահճի վերեւում կախուած քնարը կէսդիշերին սկսում էր եղանակաւոր ձայներ հանել, որոնցից թագաւորն արթնանում էր և զբաղւում Դարայի (աստուածային պատուիրանների) ուսումնասիրութեամբ: Այդպէս նա զբաղւում էր մինչև աղարակ: Հանրագիտարանի հե-

գինակը քնարի գիշերային խաղաղութեան մէջ հնչելը և նրա մեղեդիները տակ Աստուծոյ պատուիրանները սովորելը մասունցում է որպէս խաղաղութեան խորհուրդ:

Ահա այդ միեւնոյն խորհուրդն է թաքնուած նաև Մովսէս Խորենացու պատմութեամբ նաղինիկի նուագը ներկայացնելով անպայման այն միեւնոյն քառակապակցութեամբ, որը վերաբերում է Դաւթի քնարահարութեանը և Աստուածաշնչից բացի ուրիշ ոչ մի աղբիւրում մեզ չի հանդիպում (եթէ հանդիպէր էլ՝ Աստուածաշնչի չափ հանրայայտ չէր լինի), Պատմահայրը խորհրդաւոր մասունցմամբ ընթերցողին յայտնել է նաղինիկի տիրոջ՝ Սիւնեաց Բակուր նահապետի խաղաղ քնարահարութիւնը, հակադրելով Տըրդատ Բագրատունուն մթաղանուած ուղեղի դրդմամբ (ինչպէս Սաւուդի գէպում) տեղի ունեցած նաղինիկի առեանգմանը: Սիւնեաց նահապետը խաղաղ ընթերիքի էր հրաւիրել Տըրդատ Բագրատունուն և ըմբռնում էր նաղինիկի քնարի մեղեդիները: Իսկ Տըրդատ Բագրատունին սանահարում է հիւրասիրութեան կանոնները և դիմում է անարարական քայլի. փութում է խաղաղութիւնը, կատաղի կռիւ է սարքում տան մէջ, սեղանի սպասքները դարձնում է գէնք (տան մէջ գինուորում է ինչպէս Սաւուդը) և առեանգում է իրեն հիւրընկալած նահապետի վարձակին:

Այսպիսով աստուածաշնչային պատմութեամբ Խորենացուն ծառայել է որպէս միջոց՝ մեծարելու համար Սիւնեաց նահապետին և դատապարտելու համար Տըրդատ Բագրատունուն: Նա կարող էր իր նպատակին հասնել նաև առանց Աստուածաշնչի միջամտութեան, բայց Պատմահոր մեծութիւնը հենց այն է, որ նա Աստուածաշնչը գիտելով որպէս ընտրեալ ազգի՝ հրեաների պատմութիւն, որոշել է իր ժողովրդի պատմութիւնը նոյնպէս շարադրել ընտիր ժողովրդի պատմութեան ուճով, օգտագործելով նաև աստուածաշնչային համեմատութիւնների հեղինակաւոր լինելու հանգամանքը: Նա բացառապէս յայտնում է, որ Աստուածաշնչում իւրայիններէն գտնելով իրեն իր սեփա-

կան ազգ՝ միաներինը լքեց, իրեն արհամարհելի և իր կողմից նշանակուելու անարժան. «Մանաւանդ զի աստուածայնոյն Դրոյ գիւրսն ի բաց հատեալ յինքն սեպհական ազգ՝ ելիք զայլոցն իրր զարհամարելացն և իւրոց անարժան կարգելոց բանից» (Դիւք առաջին, գլ. Ե): Գտնելով, որ «բազումք զործք արութեան զտանին զործեալ և ի մերում աշխարհիս» (անդ, գլ. Գ), նա մեր ժողովրդի պատմութիւնը հիւսում է գրական ու գիտական բարձր ճաշակով ու մակարդակով: Սիւնեաց նահապետի և Բագրատունի Տըրդատի աւանդադրոյցում նա բացի աստուածաշնչական խաղաղութեան խորհուրդը կիրառելուց, դիմում է նաև աշխարհահայտ Ալեքսանդր Մակեդոնացու պատմութեանը (Սաւու կալիսթենէս) և ընդօրինակում նրա դիւցազներդական պատկերները: «Եւ անդ էր տեսանել նոր զովն Ողիսեւս՝ զՊենելոպայ զսեղեկս սատակելով կամ զՊապիթեայն և զԲուշկապարկացն կռիւս ի վերայ Պերսիթեայ հարսանեացն» (Դիւք երկրորդ, գլ. ԿԴ): Տըրդատ Բագրատունին թէև լաւ արարքի տէր չէ, բայց նա համեմատում է Ողիսեւսի հետ, այսինքն պատմիչը հայ մարդուն հասարակ մահկանացու չի համարում: Հայաստանում կատարուած գէպը նկարագրում է, ինչպէս նկարագրում է աշխարհահայտ աշխարհակալ Ալեքսանդր Մակեդոնացու պատմութիւնում գրանցուած մի իրադարձութիւն:

Խորենացուն որպէս պատմիչի գնահատելիս միշտ պէտք է յիշել, որ նա գրում էր այնպիսի ժամանակ, երբ Հայաստանը դեռ չէր ենթարկուել այսօր մեզ յայտնի 1500-ամեայ նուաճումներին ու նուաստացումներին և երբ հայ ընթերցողը դեռ չէր ընտելացել սեփական թաղաւորութիւնից ու քաղաքական նախկին կըշռից զրկուած երկրի քնակչի հոգեբանութեանը: Ինչպէս պատմիչն ինքը, այնպէս էլ նրա ընթերցողներն այնքա՛ն էլ չափ չէին հեռացած Տիգրան Մեծի և Տըրդատ Մեծի համաշխարհային թատերաբեմում խաղացած դերերի զգացումից: Նրանց օրոք Տըրդատ Բագրատունու և Ողիսեւսի, Սիւնեաց նահապետի և աստուածաշնչա-

յին Դաւթի խաղաղութեան խորհուրդների համեմատութիւնները զարմանալի չէին, որովհետեւ Աստուածաշնչում նկարագրուած զէպքերը նրանց համար առասպելներ չէին: Դաւթ արքան ու Սաուլը իրականում էլ նայնքան իրական անձնաւորութիւններ էին, որքան Սիւնեաց նահապետն ու Տրդատ Բագրատունին: Եթէ Խորենացու կողմից քննադատուող Աստ. աւածաշնչի հեղինակը Դաւթին ու Սաուլին ընտիր ժողովրդի ներկայացուցիչ համարելով՝ նրանց պատմութիւնը հիւսել է երաժշտական գործիք ու զէնք կրող ձեռների հակադրութեան խորհուրդը սեբուդներին կտակելով, ինչու նայնք չի կարող անել նաև հայ պատմիչը, որն իր ժողովրդին ոչնչով չի ստորադասուծ, թէև՝ փոքրաքանակ ենք («թէպէտ և եմք ամալ փոքր»):

Սիւնեաց և Բագրատունեաց տոհմերը նշանաւոր էին: Բակաւրն ու Տրդատը նայնպէս հասարակ մարդիկ չէին: Բակաւրը տոհմի նահապետն էր, իսկ Տրդատը՝ Հայոց արքայ Տրիանի փեսան: Խորենացին նրանց մասին պատմել է ինչպէս պատմում են նշանաւոր մարդկանց մասին: Խնդրոյ առարկայ գլխի համար նա ընտրել է այսպիսի խորագիր. «Յաղագս Տրդատայ Բագրատունեայ և անուանց ազգի նորա առաջնաց»: Վերնագրի առարկայ դարձուած անունները պարզապէս բանալի են քաջայայտելու համար այն կարեւորութիւնը, որը պատմիչը յատկացրել է հին և նոր Բագրատունիների տարբերութիւնն արձանագրելուն: Նորերին նա քննադատում է, մեղադրելով նախնիների հաւատն ուրանալու և պապենական անունները փոխելու մէջ: «Բայց գիտեա՛, զի ի թողուլ ազգին Բագրատունեաց դօրէնս հարցն՝ նախ խմական ժառանգեցին յորջորջումն . . . զրկեալ ի նախնական անուանցն»: Տրդատը նորերից էր, և Խորենացին նրա օրինակով ակնարկում է նաև միւս նորերին: «Բայց գիտեա՛ք բաւերով նա գիմում է ընթերցողներին, որոնցից մէկն էր նաև իր պատուիրատու Սահակ Բագրատունին: Վերջինիս սակայն, նա գովարանում է, տարբերելով Տրդատի ժամանակակիցներից:

Յատկապէս Տրդատ անունով մէկին ընտրելով, ինչպէս երեւում է, նա միաժամանակ կամեցել է պարզաբանել առհասարակ Տրդատ անունն շուրջ իր ժամանակ շրջանառութեան մէջ գտնուած մի զրոյց՝ կառանց վրայ բռնանալու մասին: Այդպիսի մի ենթադրեալ զրոյցից առանձին տարրեր փոխանցուել են սուրբ Հռիփսիմէին . . . Գեղեցիկ Նազինիկի վրայ տարէջ Տրդատի բռնանալը նայնպէս գլխաւոր դեր է խաղում Մովսէս Խորենացու հաղորդման մէջ» (Ա. Յոն Դուաշմիդ, Ազաթանգեղոս, Լայպցիգ, 1877, էջ 58. գերմաներէն): Հաւանաբար զրոյցի արձագանգներից է նաև «Քահանայ և կոյս ծերացեալս վերնագրով, ձեռագրերում պահպանուած, պատմածքը, որի հերոսը կոյսին ցանկանալու պատճառով «իբրև խոզի աղմի մինչև ի վախճան թաւալ էր» (Էջեր Հայ Միջնադարեան Գեղարուեստական Արձակից, Երեւան, 1957, էջ 130): Հռիփսիմէին ցանկացած ու խոզացած Տրդատի մասին պատմուող զրոյցը յիշեցնող այս աւանդութիւնը յարմարեցուած է քահանայական բարոյականութեանը, բայց չի կորցրել Տրդատի վերաբերեալ պատմուած ազաթանգեղան պատումի հեռքերը: Հնարաւոր է, որ զրոյցի տարբերակներից մէկում էլ Նազինիկի վրայ բռնացած Տրդատը նայնացուած լինէր Տրդատ արքայի հետ, և Խորենացին որոշել է պատմել իսկական բռնացողի մասին: Եւ սա զարմանալի չէ: Միջնադարեան զրոյցներում յաճախ է պատահում, երբ տարբեր անձինք հանդէս են գալիս որպէս միեւնոյն արարքների հեղինակ: Պատմահայրը Տրդատ Մեծ արքային մեծարում է և լուսթեան է մատնում Հռիփսիմէի վրայ բռնանալու հանրայայտ պատմութիւնը: Սա պատմահայր համարել չի կարելի: Դրանով նա հաւանաբար կամեցել է ընթերցողի յիշողութեան մէջ թողնել միայն Տրդատ Բագրատունի բռնութեան զէպքը:

Եթէ 19-րդ դարում գերմանացի գիտնական Ալֆրէտ Յոն Դուաշմիդը յանգել է Տրդատ Բագրատունու և Նազինիկի միջոցով Տրդատ Արշակունի արքայի ու Հռիփսիմէի միջոցակցի հետ համեմատելու

մտքին, կը նշանակի Խորենացու օրոք նայնպէս բացառուած չէր նման բովանդակութիւն ունեցող աւանդութիւնների մերձեցումը: Այդուհանդերձ իմ դատողութիւնները միայն ենթադրութեան ոյժ ունեն և արտայայտում են պարզապէս Խորենացուն հասկանալու ձգտում: Իսկ ձգեալ անհրաժեշտ է, որովհետեւ ղեռնապատասխանի կարիք ունի այն հարցը, թէ Պատմահայրն ինչո՞ւ է առանձին գլուխ նուիրել Տրդատ Բագրատունուն (Վատիկան Տրդատայ Բագրատունու և անուանց ազգի նորա առաջնոց): Պէտք է հասկանալ նաև, թէ ինչու պատմիչը Բագրատունի Տրդատի և Նազինիկի պատմութեան վերջում կցել է այդ պատմութեանը Հառնէսուղ անունները Բագրատութիւնը, որը նա այնքան կարեւոր է համարել, որ այդ մասին յայտնել է նաև գլխի խորագրում: Պատմահայրը սովորական պատմիչ չէր: Նա իր գրքում հաւաքել է միայն խորհուրդ ունեցող անգնկութիւններ: Նազինիկի առեւտրական գրոյցն ինքնանպատակ, որպէս սոսկ հետաքրքիր գրոյց, ներկայացնելը Խորենացուն յատուկ չէ: Բացի դրանից՝ նա Պատմութեան ընթացքում արդէն յայտնել էր Բագրատունիների նախնիների մասին: Եթէ դրանով չի բաւարարուել և Տրդատ Բագրատունուն նուիրում գլխում յատուկ յաւելուած է յատկացրել հին և նոր Բագրատունիներին հակադրելու և հներին պաշտպանելու համար, կը նշանակի նա ինչ-որ խորհուրդ է կամեցել կտակել սերունդներին: Արդեօք Բագրատունեաց և Սիւնեաց տոհմերի խաղաղ բարեկամութեան քառազը չէ՞ այդ խորհուրդը: Տրդատ Բագրատունին խախտել էր բարեկամութիւնը, այն էլ՝ այն պահին երբ, ընդհանրապէս, պարտաւոր էր երախտապարտ լինել հիւրասիրութեան համար: Նա խախտեց Բագրատունիներից էր:

(Վերջ՝ 3)

Ինչպէս տեսնում ենք, իմ ենթադրութիւնների հաւաստութեան չափից անկախ, «երգէր ձեռամբ» բառակապակցութիւնը պարունակող աւանդութեան սուսուփասիրութիւնը գիտական կարեւորութիւն ունի: Վատ չէր լինի, եթէ Մինասեանն էլ իր նպատակը բերէր խորենացիագիտութեանը: Այն ինչ նա այնքան է տարուած եղել իր հովանաւորեալով, որ մոռացել է Խորենացու շահերը և հեգնել է այդ շահերը պաշտպանողին «նրա (Արգարեանի — Գ. Ա.) կարծիքով» սոյն արտայայտութեան («երգէր ձեռամբ» — Գ. Ա.) սուսուփասիրութիւնը գիտական կարեւորութիւն ունի» (140): Հեգնելիս նա չի նկատել, որ ինքը չափից շատ աշխատանք է կատարել «յայտնաբերելու» համար Արգարեանի «թաքցրածը»: Դիմել է Աստուածաշնչի օտար լեզուներով թարգմանութիւններին և Համարարարներին, չարչարուել է մինչև որ գտել է «թաքստացը»: Եթէ «թաքցուածը» գիտական կարեւորութիւն չունէր, արժե՞ր այդքան շարչարեւել: Աւելի լաւ չէ՞ր լինի յօդուած գրելուց առաջ համապատասխան գիտելիքներ հաւաքել բանավէճի առարկայի վերաբերեալ և համոզուել, որ ինձ առարկելու համար անտեղի ժամանակ չպէտք է կորցնեմ ո՛չ իր պաշտպանեալը (որը մասնազէտ չլինելով՝ կարծել է, թէ մեր լուսաւոր դարում ես կարող էի յանգել Աստուածաշունչը կեղծելու մտքին), ո՛չ էլ ինքը (որը մի ամբողջ յօդուած է գրել, համոզելու համար, որ Աստուածաշունչում իրօք գոյութիւն ունի այն, ինչ ցոյց է տուել «արդար անխառն» բանավէճ «չմղողը»):

Ինչպէս Աստուածաշնչում, այնպէս էլ հայրենաշունչ «Հայոց պատմութիւնում» «երգէր ձեռամբ» խորհրդանշում է խաղաղութիւն և առաքինութիւն: Ուրեմն հետեւենք նախնեաց պատուիրաններին:

ԳԵՈՐԳ ԱՅԳԱՐԵԱՆ

Երևան, Մատենադարան